

մը կըրնան ձևացընել: Այսպիսի է ա-
նուանի հնդկաթղենին յափունս ներ-
պուտտայ 'ի Հնդկաստան. այս ծառս
զոր ասկէ 2200 տարի առաջ տեսաւ
Մեծն Ալեքսանդր՝ դեռ ողջ է. 350 մեծ
բուն ունի, 3000էն աւելի ալ պղտիկ.
որք 2000 ոտք տեղ կը շրջապատեն, և
որոց տակ 7000 զօրաց գունդ մը բա-
նակեցաւ: — Ասոր նման է և մանգլե-
նին. որ և այս բանիս համար՝ արմատա-
ծառ կը կոչուի, հազիւ քանի մ' ոտք գետ-
նէն բարձրացած՝ նոր արմատներ կ'ար-
ձրկէ 'ի ճախճախուտն, (վասն զի այս-
պիսի տեղ կը բուսնի), որք զինքն ա-
ւելի կը հաստատեն, և գագաթներէն
մէկմէկ ճիւղ կու տան. այս կերպով
մեծամեծ կոյս անտառներ կը ձևացը-
նէ. և իր երկու և կէս ոտնաչափ մեծա-
մեծ կաղամբաձև պտուղները կը կախէ
ինչուան ջրոց երեսը. այս պտուղներէն
ալ նոր արմատներ կ'ելնեն, և տեղը ալ
աւելի խիտ և անթափանց կ'ընեն, յար-
մար 'ի բնակութիւն կոկորդիլոսաց և
օձից: Ուրիշ բուսոց ալ սերմն կամ
հունտերն շատ ծանր ըլլալով՝ չեն ցրուիր
'ի հովէն, և մօտ տեղուանք ընկնալով
հօն կը բուսնին, և այնպէս կը հաստա-
տուի ընկերակցութիւնն:

Ահա այս պատճառներով կը ձևա-
նան հասարակութիւնք անտառաց, խո-
տոց, խարձից, մամուոց, անպիտան խո-
տոց և մօռից: Այրեցեալ դօտուոյն տակ
բուսոց ընկերակցութեան չյաջողելուն
մէկ պատճառն է՝ ծառոց իրենց տակ
եղած ճիւղերը խղղելն, զրկելով 'ի լու-
սոյ՝ որոյ կարօտին շատ բոյսք առ 'ի
զտել ածխային թթուն: Իսկ որոնք որ
առանց լուսոյ ուղղակի ներգործու-
թեան ալ կըրնան զայն լուծել՝ շուքի
տակ ալ կ'ապրին, թէ կոյս անտառաց
մէջ թէ ուրիշ կողմեր. թուի թէ ասոնք
իրենց ածխային թթուն կը լուծեն ներ-
գործութեամբ այն կանաչ լուսոյ՝ զոր
կ'արձրկէ մամուոց կապերտն, և կամ
թէ շուքն իրենց այնպիսի չափաւոր բա-
րեխառնութիւն մը տաքութեան կու
տայ՝ որ կարենայ իրենց նիւթոյ փոփո-
խութիւնն անվտանգ կատարուիլ:

ԼԵԱՌՆ ԲՈՐԲՈՔԵԱԼ.

Երկու դար կայ որ Սաարպրիւք քաղ-
քին մօտերն եղող Սաար հովտին ած-
խահանքն երևելի եղած է, և պատ-
ճառն է որ այս կողմերս եղող լե-
րանց միոյն վրայէն ասկէ երկու դար
առաջ ճերմակ մոխրագունի զարկած
մուխ մը սկսաւ վեր ելլալ, որ և մինչև
ցայսօր կը շարունակէ անընդհատ: Եւ
եղած մուխն ոչ թէ գործաւորաց ածուխ
հանելու համար բացած ճեղքուածքնե-
րէն, այլ լերան զառ 'ի վայրին վրայ ե-
ղած բնական պատառուածքէն կ'ել-
լայ:

Մուխին հոտը բոլորովին նոյն է քարե-
ջրոյ հոտոյն հետ, և ինչպէս կ'երևայ մեր
առաջիկայ պատկերէն, 'ի բաց առեալ
անմիջապէս մերձաւոր տունկերն, շատ
մեծ փսաս մը չընեն նոյն կողման տնկոց:
Մինչդեռ շատ աւելի հեռու տեղուանքն
դաշտերն մերկ և ծառերն տերևաթափ
են, հոս լեռան վրայ ամենայն ինչ կար-
ծես 'ի դարնան այնպէս լաւ վիճակի մէջ
է: Ոչ սառ կ'երևի և ոչ ձիւն. խոտալից
գետիններ և կանաչազարդ ծառեր. թէ-
պէտ ճշմարիտն ըսելով, այս ծառոց տե-
րևներն քիչ մը դեղնութեան կը զար-
նեն, որ շատ այնչափ զօրաւոր կենդա-
նութեան մը նշան չէ:

ՆՈՐ ԵՒ ՄԵՐ ՋՐԱԿԺ ՄԸ. — Ամերիկայ Անգ-
ղիական Կոլոնիա աշխարհին մեծ գետերուն
քննութեան վերակացուն՝ Պ. Պրաուն, Մասսա-
րուս գետոյն աղբերաց մօտ տեսաւ, իբրև 30
մղոն հեռուէն, յորդահոս գետոյ մը թափուածք
Ռերաիմա կոչուած լեռանց քարաժայռերէ, որ
2000 ոտք բարձր են, և ինչուան հիմայ դեռ
մարդկանցմէ անկոխ կարծուին, ամեն կողմէ ալ
սեպացեալ ըլլալով. գագաթն տափարակ է և
ընդարձակ կ'երևի: Տեղացի Ամերիկացիք կ'ըսեն
թէ թափուած գետն է Գարունի կոչուածն, օ-
ժանդակն Օրինոգոյ. ժայռերէն վար ընկնալէն
վերջն ալ՝ 3000 ոտք զառիվայր գետնի վրայէն սա-
հելով կ'անցնի ջրվէժն:

